Ծրագիրը համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար

ԵՄ-Հայաստան հարաբերությունների փորձագետ-դասընթացավար

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆ՝ ԵՄ-Հայաստան հարաբերություններ

ՎԱՅՐԸ՝ Երևան, ՀՀ մարզեր

Ծրագրի նկարագիրը

«Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի և Մաաստրիխտում գործող «Եվրոպական լրագրության կենտրոն»-ի կողմից: Ծրագրի նպատակն է օգնել հայ բնակչությանը՝ հատկապես մարզերում, մեծացնել պետական բյուջեի, պետական ծախսերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և իրազեկել կառավարության կողմից բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն ստանալու իրենց իրավունքների մասին:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ծրագիրը կսկսի ազգային և մարզային ՔՀԿ-ների վերապատրաստմամբ՝ նրանց տալով անհրաժեշտ գիտելիք և հմտություններ, որպեսզի նրանք կարողանան լիովին աջակցել քաղաքացիներին, և դրա համար ստանալ իրենց համար անհրաժեշտ հավաստի տեղեկատվություն: Վերապատրաստումների ընթացքում փոխանցված գիտելիքները ՔՀԿ-ներին կօգնի տեղեկացված լինել ԵՄ-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող օժանդակության մասին, և հատկապես, թե որ ոլորտներում և ինչպես է ԵՄ-ն աջակցում Հայաստանում զարգացման ծրագրերին: Այդ ոլորտները ներառում են պետական ծրագրեր հանրային առողջապահության, տրանսպորտի, շրջակա միջավայրի, էներգաարդյունավետության և այլ ոլորտներում: Վերապատրաստումների ընթացքում ՔՀԿ-ներին կներկայացվի նաև պետական բյուջեի մշտադիտարկման մեթոդաբանությունը:

Աշխատանքի նկարագիր.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հայտարարում է դասընթացավարների մրցույթ՝ իրականացնելու վերապատրաստման դասընթացներ «ԵՄ-Հայաստան հարաբերություններ» թեմայով, որը պետք է ընդգրկի հետևյալը.

1. հակիրճ ներածական տեղեկություն ԵՄ-ի և Արևելյան գործընկերության մասին,
2. ԵՄ-ի կողմից Հայաստանին ներկայացվող ինտեգրման պահանջները, հատկապես առողջապահության, տրասպորտի, էներգաարդյունավետության, շրջակա միջավայրի, խտրականության դեմ պայքարի և այլ ոլորտներում: ԵՄ ինտեգրմանը խթանող քաղաքականության և վերահսկողության միջազգային լավագույն փորձը
3. ԵՄ բյուջետային աջակցության ծրագիրը, ֆինանսական օգնության ոլորտները և ընթացակարգը:

Ընտրված դասընթացավարը պետք է մշակի և իրականացնի 12 դասընթաց 7-8-ական հասարակական և լրատվական կազմակերպությունների համար Երևանում և մարզկենտրոններում: Դասընթացավարի ներգրավվածությունը ծրագրում 24 օր է: Դասընթացն իրականացվելու է հայերենով:

Դասընթացի թեմայի մշակման համար դասընթացավարները կաշխատեն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի համակարգող թիմի հետ:

Դասընթացավարի պարտականությունները.

- հիմք ընդունելով ընդհանուր ուսուցման նպատակները՝ մշակել դասընթացների մեթոդաբանությունը, ուսումնական լրացուցիչ նյութեր, ինչպես նաև թեստեր՝ թեմայի վերաբերյալ մասնակիցների նախնական և վերջնական գիտելիքների գնահատման համար
- անցկացնել դասընթացներ Երևանից և մարզերից ընտրված թեկնածուների համար (հայերեն լեզվով)
- ներկայացնել դասընթացի համառոտ հաշվետվություն դասընթացի ավարտից հետո՝ ներառելով մասնակիցների կողմից առավել շատ հնչեցված հարցերի/ մտահոգությունների մասին տեղեկություն:

Ծրագրի մշակումը եւ վերապատրաստման դասընթացների անցկացումը նախատեսվում է իրականացնել 2018 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Դասընթացավարը պետք է այցելի Հայաստանի տարբեր մարզեր:

Նշանակված ժամկետների սահմաններում դասընթացավարը պետք է իրականացնի հետևյալը.

դասընթացների ծրագրի մշակում և ձևավորում	սեպտեմբեր 2018
դասընթացների անցկացում	հոկտեմբեր-նոյեմբեր 2018
համառոտ հաշվետվության ներկայացում	նոյեմբերի վերջ 2018

Պահանջվող որակավորում, հմտություններ և փորձ.

- դասընթացների պատրաստման և անցկացման առնվազն 1 տարվա փորձ,
- Բարձրագույն կրթություն դասընթացի թեմային առնչվող ոլորտում կամ նշված ոլորտում առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն,
- հայերենի գերազանց իմացություն, անգլերենի իմացությունը ցանկալի է,

- Աուդիովիզուալ գործքներով դասընթացի նյութերը մշակելու եւ ներկայացնելու կարողություն:,
- Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ ուսուցանելու կարողություն եւ փորձ
- Ինֆորմացիայի առավելագույնս մատչելի եւ հասանելի կերպով մատուցման հմտություն
- Հետազոտական հմտություններ
- գրավոր և բանավոր հաղորդակցության հմտություններ, ճշտապահություն և ճկունություն:

Դասընթացի ընթացքում դասընթացավար-փորձագետի տեղափոխման, կեցության ու սննդի հետ կապված բոլոր ծախսերը ֆինանսավորվում է ծրագրի կողմից:

Ընտրված դասընթացավար-փորձագետների հետ նախատեսվում է կնքել Ծառայությունների մատուցման մասին պայմանագիր:

Հայտերի ներկայացման կարգը

Ներկայացված պահանջներին բավարարող եւ հետաքրքրված անձինք կարող են իրենց հայտն ուղարկել foi@foi.am էլ.փոստի հասցեին: Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել դասընթացավար-փորձագետի պաշտոնի անվանումը («ԵՄ-Հայաստան հարաբերությունների փորձագետ-դասընթացավար»):

Հայտին պետք է կցված լինի

1. Ինքնակենսագրական (CV)՝ շեշտադրելով տվյալ թեմայով իրականացված դասընթացների փորձառությունը,
2. Հայտատուի անձը/քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ:

Ըստ ինքնակենսագրականում նշված տեղեկատվության ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018թ հուլիսի 9-ը ժամը 24:00:

Հայտի ստացման մասին հայտատուն կտեղեկացվի երկօրյա ժամկետում՝ պատասխան էլեկտրոնային նամակի միջոցով:

Մրցույթի արդյունքի մասին հայտատուն կտեղեկացվի մինչեւ 2018 թ. հուլիսի 17-ը: